

ալիքները չկրցին անցնիլ իմ գլխին վրայէն և իմ ուսերէս: Ուրեմն ես աւելի բարձր եմ քան միւս լեռները: Իմ օրինաւոր իրաւունքն է Աստուծոյ ընծայել այն տեղը ուր պիտի բազմի»:

Թաբոր լեռը կը նկատուի այն լեռը ուր Յիսուս այլակերպեցաւ (Մատթ. ԺԵ. Գռկ. Թ. 98) թերեւս համաձայն այն աւանդութեան որ կ'ակնարկուի Բ. Պետր. Ա. 18 և ընդհանրապէս Գ. դարուն Պաղեստինի մէջ ընդունուած. առաջին անգամ կը յիշատակէ զայն Կիւրեղ Երուսաղէմացի իր «Կոյումն ընծայութեան» մէջ (ԺԲ. 16): Այս աւանդութիւնը կը հաստատէ Եբրայեցոց աւետարանը զոր մէջ կը բերէ Որոգինէս. հո՛ն է որ Յիսուս կ'ըսէ իրեն համար. «Ո՛վ մայր, Ս. Հոգին իմ մագերուս մէկ թելէն բռնելով տարաւ զիս Թաբոր լեռան բարձունքը»: Կը կարծուի թէ այս խօսքով կ'ակնարկուի անոր Այլակերպութիւնը: Ամէն պարագայի մէջ այս աւանդութիւնը ցոյց կուտայ թէ Յիսուսի պատմութեան մէջ որպիսի տեղ մը կը տրուէր նոյն հրաշալի լեռան:

Գրիստոսի Այլակերպութեան աւանդութենէն զատ, Թաբոր լեռը կը նկատուի իբր ժամադրաւայր Յիսուսի այն աշակերտներուն՝ որ անոր յարութենէն յետոյ հոն հաւաքուեցան. արդէն Թաբորը մօտ էր հաղորդակցութեան մեծ ճանապարհին, և ըստ ոմանց, Թաբորը պէտք է հասկնալ այն անանուն լեռը որ կը յիշուի Մատթէոսի Աւետարանին մէջ (ԻԸ. 16, Ա. Կորնթ. ԺԵ. 6): 530 ին Թէոդոսիոս ուղեգիրը կը վկայէ թէ Մատթէոսի ակնարկած անանուն լեռան դերը կատարած է Թաբորը: Անկարելի չէ որ այդպէս էր Գալիլիոյ տեղական աւանդութեան նախնական կորիզը (Dal. էջ 151-154): Մեր եկեղեցիին վարդապետներ